

Կազմող՝ հոգեբանական գիտությունների
թեկնածու **Դ. Ռ. Հայրապետյան**

Գրախոսներ՝ **հ.գ.թ., պրոֆեսոր Է. Գրին**
հ.գ.թ. Ն. Խաչատրյան

**«ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ»
«ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՈՒՄ»**

Ուսումնական ծրագրեր

Ո – 810 «Որոշման ընդունման հոգեբանություն», «Համակարգչային հոգեախտորոշում» դասընթացի ուսումնական ծրագրեր (ուսումնամեթոդական ուղեցույց): Կազմող՝ Դ. Ռ. Հայրապետյան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2008, 56 էջ:

Սույն ձեռնարկում ընդգրկված են «Որոշման ընդունման հոգեբանություն» եւ «Համակարգչային հոգեախտորոշում» մագիստրոսական առարկաների ուսումնական ծրագրերը, ինչպես նաեւ ներկայացված է այդ առարկաների շրջանակներում անցկացվող գործնական աշխատանքների, վարժությունների լայն ընտրանի: Ձեռնարկն առանձնանում է նրանով, որ պարունակում է նաեւ գիտելիքների ընթացիկ ստուգման թեստային առաջադրանքների եւ խնդիրների տիպային օրինակներ:

Ձեռնարկը նախատեսված է այս ոլորտում դասավանդողների, մագիստրատուրայի ուսանողների եւ որոշման ընդունման հոգեբանության եւ համակարգչային հոգեախտորոշման հիմնախնդիրներով հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 88

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. «ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. «ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ.....

- ԹԵՄԱ 1. ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ:
ԿԱՌԱԿԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ
- ԹԵՄԱ 2. ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՅ ԵՎ ՄՈՂԵԼՆԵՐԸ
- ԹԵՄԱ 3. ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԾՇԳՐԻՏ
ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
- ԹԵՄԱ 4. ՈՐՈՇՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱ-
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՄԲՈՒՄ.....

ԲԱԺԻՆ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ.....

ԲԱԺԻՆ 3. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ.....

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՈՒՄ»
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ.....

ԲԱԺԻՆ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ.....

ԲԱԺԻՆ 3. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ.....

**«ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկան դասավանդվում է Երեւանի պետական համալսարանի Փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի «Կառավարման եւ կազմակերպչական հոգեբանություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում՝ որպես հիմնական առարկա: Առարկայի ուսուցանումը հիմնվում է «Իմացական գործընթացների հոգեբանություն», «Գործարար հաղորդակցման հոգեբանություն», «Անձի հոգեբանություն» առարկաների սահմաններում ձեռքբերված գիտելիքների վրա:

Հիմնական նպատակն է ուսանողների մոտ ձեւավորել հմտություններ, որոնք թույլ կտան օգտագործել որոշման ընդունման ժամանակակից եւ դասական տարբեր մոտեցումներ՝ վերջիններիս առավել արդյունավետ իրականացման համար: Առարկայի սահմաններում ուսուցանվող գիտելիքները եւ ձեւավորվող հմտությունները հատկապես ընդգրկում են կառավարչական որոշումների կայացման ոլորտը:

Ծրագիրը ենթադրում է նաեւ գործնական աշխատանքների կատարում, որոնք ուսանողներին թույլ կտան, կախված համապատասխան իրավիճակից, ինքնուրույն մշակել եւ կիրառել համապատասխան մեթոդական հնարներ՝ առավել արդյունավետ որոշումների կայացման համար:

Առարկայի հիմնական խնդիրն է ոչ այնքան ինֆորմացիայի տրամադրումը, որքան դրան զուգահեռ վերջինիս օգտագործման

ունակությունների զարգացումը: Սա նախ եւ առաջ ենթադրում է բազմաթիվ գործնական աշխատանքների իրականացում եւ ապա՝ ուսանողի կողմից մեծ ծավալի ինքնուրույն աշխատանքի կատարում:

Առարկայի դասավանդումը ենթադրում է նաեւ կառավարչական որոշումների կայացման ինչպես բարդ մաթեմատիկական մեթոդների եւ մեծածավալ ինֆորմացիայի, այնպես էլ հարաբերականորեն պարզ մոտեցումների կիրառում պահանջող ժամանակակից բազմաթիվ գործնական հնարների եւ մեթոդների մատուցում:

Առարկայի գործնական ուղղվածությունը հաշվի առնելով՝ բաց է թողնված բարդ մաթեմատիկական մոտեցումներ պահանջող որոշման ընդունման մոդելների քննարկումը՝ այնպիսին, ինչպիսին է «խաղերի տեսությունը», սակայն դրա փոխարեն շեշտադրված են որոշման ընդունման բնութագրական մոդելները, որոնք բխում են հետեւյալ բանաձեւից՝ «կառավարման կոնկրետ խնդիր - դրա լուծման տարբերակներ»:

Առարկայի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ դրա հիմքում ընկած են ոչ այնքան անզլալեզու, որքան ռուսալեզու եւ, հատկապես, գերմանալեզու աղբյուրներ, որոնք առանձնանում են իրենց մանրակրկիտությամբ եւ գործնական ուղղվածությամբ:

Որոշման ընդունման հոգեբանական հնարների մեջ առավել կարելի է ստեղծագործական մոտեցումները եւ հատկապես քննարկվում է ստեղծագործական որոշումների ընդունման գործընթացը: Առարկայի յուրացման ստեղծագործական մեկ այլ մոտեցմամբ պահանջվում է ուսանողի կողմից այնպիսի հմտությունների մշակում, որոնք հետագայում թույլ կտան, հայտնվելով խնդրային իրավիճակում, ինքնուրույն մշակել եւ կառավարչական ոլորտում ներդնել արդյունավետ եւ ստեղծագործական որոշումների ընդունման ֆունկցիոնալ համակարգեր: Ինչպես նաեւ պայմանավորված կառավարչական գործունեության ուղղվածությամբ, մշակել եւ կիրառել կառավարիչների կողմից որոշման ընդունման անհրաժեշտ որակների ձեւավորման եւ զարգացման թրեյնինգային ծրագրեր:

Առարկայում հատուկ տեղ են զբաղեցնում որոշման ընդունման գործընթացի, ինչպես նաև որոշման ընդունման գործնական կիրառելի մոդելների մանրամասն որակական քննարկումն ու վերլուծությունը:

Առարկայի ուսուցանման արդյունքում ուսանողները պարտավոր են.

- պատկերացում ունենալ որոշման ընդունման հոգեբանական տեսությունների մասին,
- կարողանալ վերլուծել որոշման ընդունման գործընթացը,
- գործնականում, ըստ անհրաժեշտության, կիրառել որոշման ընդունման առավել արդյունավետ մոդելը,
- հասկանալ կառավարչական որոշումների ընդունման առանձնահատկությունները,
- հասկանալ անհատական եւ խմբային որոշման ընդունման ընդհանրություններն ու տարբերությունները,
- կարողանալ չափել որոշման ընդունման անհատական առանձնահատկությունները,
- կիրառել որոշման մշակման եւ ընդունման ակտիվացման եւ ուղղորդման անհատական եւ խմբային մեթոդներ:

Գիտելիքների ստուգման համակարգը:

Ուսումնական առարկայի գումարային արդյունքը ստացվում է հետևյալ բաղադրիչներից.

- մասնակցություն դասերին (1 ժամ դասախոսությունը՝ 0,1 միավոր, 1 ժամ գործնականը՝ 0,15 միավոր: Ընդհանուր՝ 4 միավոր):
- թեստային ընթացիկ գրավոր ստուգումներ (յուրաքանչյուր աշխատանքը գնահատվում է 10 բալանոց համակարգով, թեստային յուրաքանչյուր բալը՝ 0,2 միավոր: Ընդհանուր՝ 4 միավոր):
- ինքնուրույն էսսեի կամ ռեֆերատիվ աշխատանքի կատարում (ընդհանուր՝ 4 միավոր):

- ակտիվ մասնակցություն դասընթացներին եւ բանավոր հարցերին պատասխանում (ընդհանուր՝ 2 միավոր):
- բանավոր ստուգարք (պատասխաններ ստուգողական հարցերին՝ 6 միավոր):

Առարկան ընդգրկում է 16 ժամ դասախոսություն եւ 16 ժամ գործնական աշխատանքներ, ինչպես նաև 58 ժամ ինքնուրույն աշխատանք: Առարկան մագիստրոսական ծրագրի շրջանակներում տրամադրում է 3 կրեդիտ:

ԲԱԺԻՆ 1

**«ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՄԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ**

	Թեմայի անվանումը	դաս.	գործ.	ինքն.
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՄԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ: ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ				
1.1	Որոշման ընդունման հոգեբանության առարկան եւ խնդիրները: Որոշման ընդունումը որպես անձի գործունեության հոգեկան կարգավորման ինտեգրալ գործընթաց:	1		4
1.2	Խնդրային իրավիճակ. հոգեբանական վերլուծություն եւ առանձնահատկությունները: Որոշման ընդունման փորձարարական ուսումնասիրման հիմնական սկզբունքները:	1	2	6
1.3	Կառավարչական որոշումների /ԿՈ/ հասկացությունը: ԿՈ-ի դասակարգումը:	2	2	6
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՄՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ ՄՈԴԵԼՆԵՐԸ				
2.1	Որոշման մշակման եւ ընդունման գործընթացը:	1		4
2.2	Կառավարչական որոշումների մշակման առանձնահատկությունները:	1	2	4
2.3	Որոշման ընդունման որակական մոդելները:	2	2	6
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՄՈՒՄԸ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՃՇՋՐԻՏ ՏԵՂԵԿԱՏԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ				
3.1	Անձը որպես որոշման ընդունման կենտրոնական օղակ: Որոշման ընդունման անձնային գործոնները:	2		4
3.2	Ռիսկի հասկացությունը եւ նրա դասակարգումը:	1		6

3.3	Ռիսկի նվազեցման եւ կանխարգելման մեթոդները:	1	2	6
ՈՐՈՇՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՄԲՈՒՄ				
4.1	Անհատական եւ խմբային որոշումների ընդունման ընդհանրություններն ու տարբերությունները:	1	2	2
4.2	Խմբային որոշման ընդունման որակական ցուցանիշները:	1	2	4
4.3	Խմբային որոշման ընդունման մեթոդները:	2	2	6
ԸՆԴԱՄԵՆԸ		16	16	58

**ԹԵՄԱ 1. ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՄԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ-
ՆԵՐԸ: ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ:**

Առաջին թեման իր եռությամբ ներածական է, որում տրվում են հիմնական հասկացությունների բացատրություններն ու դասակարգումները: Այն թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել որոշման ընդունում պահանջող խնդրային իրավիճակների հիմնական առանձնահատկությունների մասին: Ինչպես նաեւ ծանոթանալ որոշման ընդունման փորձարարական ուսումնասիրման հիմնական մոտեցումներին:

Հատուկ առանձնացվում են կառավարչական որոշումները եւ տրվում են դրանց հիմնական դասակարգումները: Որոշման ընդունման առաջին երկու փուլերը «Խնդրի ճանաչում» ու «Որոշման ընդունման սահմանափակումների եւ չափանիշների ձեւակերպումը», հանդիսանալով առավել կարեւոր, գործնականում հաճախ են անտեսվում: Այս թեմայի սահմաններում մանրամասն քննարկվում են խնդրային իրավիճակի առանձնահատկությունները: Հատկապես կարեւորվում է որոշման ընդունումը որպես անձի գործունեության հոգեկան կարգավորման ինտեգրալ գործընթաց:

ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1.1 Որոշման ընդունման հոգեբանության առարկան եւ ինդիքները: Որոշման ընդունումը որպես անձի գործունեության հոգեկան կարգավորման ինտեգրալ գործընթաց:

Որոշման ընդունման գործընթացի էությունը: Որոշման ընդունման հիմնախնդրի մեթոդոլոգիական մոտեցումները. որոշման ընդունումը գործունեության մեջ (Բ. Դ. Շադրիկով, Ա. Վ. Կարպով), որոշման ընդունումը ինդրային իրավիճակներում (Ն. Ի. Բուլաեւ, Բ. Պերֆիրեւ), որոշման ընդունումը ռիսկի եւ անորոշության պայմաններում (Տ. Վ. Կորնիլովա, Դ. Կանեման):

Ինքնուրույն աշխատանք

1.1.1 Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Корнилова Т.В. Психология риска и принятия решений. М., 2002.
2. Шадриков В.Д. Деятельность и способности. М., 1994.
3. Булаев Н.И. Поиск и принятие решений в проблемной ситуации. М., 2005.

1.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. *Որոշման ընդունման գիտական ուսումնասիրման նախահիմքերը եւ պատմությունը:*
2. *Որոշման ընդունման հիմնական ոլորտները:*
3. *Որոշման ընդունման դերը անձի առօրեական եւ գործնական գործունեության մեջ:*

Թեմա 1.2 Խնդրային իրավիճակ. հոգեբանական վերլուծություն եւ առանձնահատկությունները: Որոշման ընդունման փորձարարական ուսումնասիրման հիմնական սկզբունքները:

Որոշման ընդունման գործառույթների կազմակերպչական, կառավարչական եւ հոգեբանական կողմերը: Համակարգային մոտեցում որոշման մշակման եւ ընդունման գործընթացի վերլուծությունը

(Յու. Ն. Արսենեւ, Լ. Յու. Կարաս, Ա. Վ. Կարպով, Վ. Վ. Մելնիկ, Վ. Դ. Շադրիկով):

Որոշման ընդունման գործընթացի հոգեախտորոշման եւ վերլուծության մեթոդները:

Ինքնուրույն աշխատանք

1.2.1 Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Арсеньев Ю.Н. Принятие решений: интегративные, интеллектуальные системы. Уч. пособие. М., 2003.
2. Карась Л.Ю. Системный анализ и принятие решений в деятельности менеджера. Уч. пособие. М., 1996.

1.2.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. *Որոշման ընդունման ուսումնասիրման մեթոդոլոգիան եւ մեթոդները:*
2. *Որոշման ընդունման գործառույթները:*

Թեմա 1.3 Կառավարչական որոշումների /ԿՈ/ հասկացությունը: ԿՈ-ների դասակարգումը:

Որոշման ընդունման գործընթացի դերը կառավարչական եւ գործարար գործունեության ոլորտում (Գ. Կուսեց, Օ'Դոննել, Չ. Բեռնարդ, Մ. Մեկսոն):

Կառավարչական որոշումների դասակարգման սկզբունքները եւ տեսակները (Սայմոն):

Ինքնուրույն աշխատանք

1.3.1 Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Друкер П.Ф. Эффективное принятие решений. М., 2006.
2. Перфирьев Б. Современные концепции кризисов и принятия управленческих решений // Российский экономический журнал. № 4, 2004. С. 30-50.

1.3.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Կառավարչական որոշումների ընդունման յուրակերպությունը եւ առանձնահատկությունները:
2. Կառավարչական որոշումների դասակարգման սկզբունքները:

Լրացուցիչ գրականություն

1. Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решений в неопределенности. Харьков, 2005.
2. Карпов А.В. Психология менеджмента. М., 1999.
3. Корнилова Т.В. Психология риска и принятия решений. М., 2002.
4. Мельник В.В. Системы управления. М., 2002.

ԹԵՄԱ 2. ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՅ ԵՎ ՍՈՂԵՆՆԵՐԸ

Այս թեմայի սահմաններում որոշման ընդունումը արդեն սկսում է քննարկվել ոչ միայն որպես հոգեկան ինտեգրալ երեւոյթ, այլև որպես գործընթաց: Առաջ են քաշվում եւ վերլուծվում դրա ընթացքն ու փուլերը: Քննարկվում են որոշման ընդունման պրոցեսուալ առանձնահատկությունները եւ ուսուցանվում են այն հիմնական մոդելները, որոնք ընկած են որոշման ընդունման գործընթացի հիմքում: Հատուկ ուշադրության է արժանանում կառավարչական որոշումների ընդունման գործընթացի վերլուծությունը:

ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 2.1 Որոշման մշակման եւ ընդունման գործընթացը:

Որոշման ընդունման փուլերը: Որոշման ընդունման անհրաժեշտության ճանաչումը: Խնդրային իրավիճակի որոշարկումը: Խնդրային իրավիճակի բովանդակության վերլուծություն՝ իրավիճակի տեղեկատվական վերլուծություն, իրավիճակի իմպլիցիտային չափանիշների բացահայտում, խնդրի առաջացման հիմնական գործոնների որոշարկում, որոշման հիմնական պահանջների ձեւակերպում: Այլընտրանքների ձեւակերպում եւ ստեղծում: Այլընտրանքների գնահատում եւ ընտրություն: Ընդունված որոշման իրագործում: Արդյունավետության ստուգում:

Ինքնուրույն աշխատանք

2.1.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Булаев Н.И. Поиск и принятие решений в проблемной ситуации. М., 2005.
2. Друкер П.Ф. Эффективное принятие решений. М., 2006.

2.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Որոշման ընդունումը որպես հոգեբանական գործընթաց:
2. Այլընտրանքների մշակումը որպես որոշման ընդունման կարելորագույն փուլ:

Թեմա 2.2 Կառավարչական որոշումների մշակման առանձնահատկությունները:

Որոշման ընդունումը մենեջմենթի համակարգում: Որոշման ընդունման կառուցվածքի փոխկապվածությունը կառավարչական գործառույթների հետ (պլանավորում, կազմակերպում, կառավարում, հսկում) եւ փուլերից (ներուժ, պլանավորում, կազմակերպում, կառավարում, հսկում, արդյունք):

Ինքնուրույն աշխատանք

2.2.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Кирхлер Э., Щротт А. Принятие решений в организациях. Харьков, 2004. 160 с.
2. Кулагин О.А. Принятие решений в организациях. Учебное пособие. СПб. 2001.

2.2.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Կառավարչական որոշումների ընդունման փուլերն ու առանձնահատկությունները:

Թեմա 2.3 Որոշման ընդունման որակական մոդելները:

Որոշման ընդունման ռացիոնալ մոդելը. փուլերն ու գործընթացները: Որոշման ընդունման ներքին նախընտրելիության եւ բավարար այլընտրանքի սկզբունքով մոդելը: Որոշման ընդունման RAWS մոդելը. ռազմավարությունները եւ փուլերը:

2.3.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Арсеньев Ю. Н. Принятие решений: интегративные, интеллектуальные системы. Уч. Пособие. М., 2003.
2. Кирхлер Э., Щротт А. Принятие решений в организациях. Харьков, 2004. 160 с.
3. Корнилова Т. В. Психология риска и принятия решений. М., 2002.

2.3.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

Որոշման ընդունման ռացիոնալ մոդելի առավելությունները մյուս որակական մոդելների նկատմամբ:

Լրացուցիչ գրականություն

1. Корнилова Т. В. О типах интеллектуальных стратегий принятия решений // Вестн. Моск. ун-та. Сер. 14. Психология. 1985. № 3. С. 11-24.
2. Соловьев А. И. Принятие государственных решений. М., 2006.

ԹԵՄԱ 3. ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԾՇՁՐԻՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Որոշման ընդունման կոգնիտիվ մոդելները ենթադրում են սուբյեկտիվ գնահատման եւ ընտրության ակտի գործընթացների տարաբաժանում: Այս պարագայում արդեն անխուսափելիորեն ներմուծվում է ռիսկի գործոնի կամ «ռիսկի ընդունման» սուբյեկտիվ գործընթացի հասկացությունը: Այս թեմայի սահմաններում քննարկվում են ոչ ամբողջական եւ ոչ ճշգրիտ տեղեկատվության պայմաններում որոշման ընդունման գործընթացի առանձնահատկությունները: Ռիսկի գործոնը ենթադրում է սուբյեկտի գործունեություն (ֆիզիկական կամ մտային): Հետեւաբար նաեւ այս բաժնում կարելի է հասկանալ որոշում ընդունողի անձի ուսումնասիրումը, որոնք իրենց հերթին անհրաժեշտություն են առաջացնում առանձնացնել եւ ուսումնասիրել որոշման ընդունման անձնային գործոնները որպես հոգեբանական կոնկրետ իրողություն:

ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 3.1 Անձը որպես որոշման ընդունման կենտրոնական օղակ: Որոշման ընդունման անձնային գործոնները:

Որոշման ընդունման դրդապատճառային, հուզական գործոնները: Ընդունակությունների եւ անհատական ոճերի արտահայտումը որոշման ընդունման գործընթացում: Տիպաբանական մոտեցում՝ որոշման ընդունման հիմնական անհատական բնութագրիչների բացահայտումը: Ա. Ալեքսեւայի եւ Լ. Գրոմովայի տիպաբանու-

թյունը: Արդյունավետ որոշման ընդունման անհրաժեշտ անձնային հիմնական բլոկները: Ղեկավարների այն որակները, որոնք նպաստում են արդյունավետ որոշման ընդունմանը: Անհրաժեշտ կառավարչական որակների զարգացման հմտություններ:

Ինքնուրույն աշխատանք

3.1.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Кочетков В. В., Скотникова И. Г. Индивидуально-психологические проблемы принятия решений.
2. Кулагин О.А. Принятие решений в организациях. Учебное пособие. СПб. 2001.

3.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Որոշման ընդունման անձնային գործոնները:
2. Արդյունավետ որոշման ընդունման անձնային առանձնահատկությունները կառավարչական ոլորտում:

Թեմա 3.2 Ռիսկի հասկացությունը եւ նրա դասակարգումը:

Անորոշության առաջացման պատճառները: Լուծման գործընթացների կառուցվածքի ֆորմալ դինամիկան կախված անորոշության չափից: Ժամանակի դեֆիցիտի հասկացությունը:

Ռիսկային պայմաններ՝ այլընտրանքների իմացություն եւ անսպասելի արդյունք: Որոշման յուրակերպությունը՝ տեղեկույթի հավաքագրում եւ բացասական արդյունքի դեպքում հնարավոր կորուստների հաշվարկ:

Ինքնուրույն աշխատանք

3.2.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Булаев Н.И. Поиск и принятие решений в проблемной ситуации. М., 2005.
2. Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решений в неопределенности. Харьков, 2005.
3. Корнилова Т. В. Психология риска и принятия решений. М., 2002.

3.2.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Որոշման ընդունում եւ «անձնային ռիսկ»:
2. «Իրավիճակային ռիսկ» եւ որոշման ընդունում:

Թեմա 3.3 Ռիսկի նվազեցման եւ կանխարգելման մեթոդները:

Ռիսկի կանխարգելման եւ նվազեցման մեթոդները: Ռիսկի ազդեցության մոդելավորումը Մոնտե-Կարլո մեթոդով: Ռիսկի պարզագույն գնահատման մեթոդը: Ռիսկի պատճառահետեւանքային պայմանավորվածության վրա հենվող հաշվարկման մեթոդը:

Ինքնուրույն աշխատանք

3.3.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Корнилова, Т.В. Психология риска и принятия решений.- М.: Аспект Пресс, 2003.

3.3.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. «Ռիսկերի» հաշվարկը կառավարչական համակարգում եւ դրանց կանխարգելումն ու նվազեցումը:

Ֆիմնական եւ լրացուցիչ գրականություն

1. Корнилова, Т.В. Диагностика мотивации и готовности к риску. М.: Ин-т психологии РАН, 1997.
2. Перфирьев Б. Современные концепции кризисов и принятия управленческих решений // Российский экономический журнал. № 4, 2004. С. 30-50.
3. Шадриков В. Д. Введение в психологию: мотивация поведения. М., 2003.

ԹԵՄԱ 4. ՈՐՈՇՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՄԲՈՄ

Սոցիալական փոխազդեցությունները կարելի է մեկնաբանել որպես որոշման ընդունման արտաքին պայմաններ ի հակադրություն ներքին պայմանների, որոնք կապված են սուբյեկտի ինտելեկտուալ եւ անձնային ներուժի հետ: Ահա թե ինչու որոշման ընդունման գործընթացների քննարկումը անպայմանորեն ենթադրում է նաեւ խմբային որոշումների մանրամասն քննարկում: Այս թեմայի սահմաններում քննարկվում են խմբային որոշման ընդունման առանձնահատկությունները:

Առանձին ուսուցանվում են նաեւ խմբում որոշման ընդունման վրա ազդող հուզական գործոնները:

ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 4.1 Անհատական եւ խմբային որոշումների ընդունման ընդհանրություններն ու տարբերությունները:

Անհատական եւ խմբային որոշման հիմնական ընդհանրություններն ու տարբերությունները: Անհատական որոշման ընդունման առավելություններն ու թերությունները ի տարբերություն խմբային որոշման:

Ինքնուրույն աշխատանք

4.1.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Кирхлер Э., Шротт А. Принятие решений в организациях. Харьков, 2004. 160 с.
2. Литвак Б. Г. Экспертные оценки и принятие решений.- М.: Патент, 1996. - 271 с.

4.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. *Խմբային որոշումների ընդունման անհրաժեշտությունը կառավարչական ոլորտում:*

2. *Կառավարչի կողմից անհատական եւ խմբային որոշման ընդունման համահարաբերակցման հիմնահարցը:*

Թեմա 4.2 Խմբային որոշումների ընդունման որակական ցուցանիշները:

Իրվինգ Ջենիսոնի «Խմբային մտածողության» էֆեկտը: «Խմբային որոշումը խմբում» եւ «անհատական որոշումը խմբում» (Բովի-նա): «Երկրորդ հնարավորության հավաքներ» (*second-chance meetings*): «Խմբային բեւեռայնացում» (*groupshift*): Յուլզերի ազդեցությունը որոշման ընդունման գործընթացների վրա (Բրենդտետտերը):

Ինքնուրույն աշխատանք

4.2.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Карась Л. Ю. Системный анализ и принятие решений в деятельности менеджера. Уч. Пособие. М., 1996.
2. Кирхлер Э., Шротт А. Принятие решений в организациях. Харьков, 2004. 160 с.
3. Корнилова, Т. В. Психология риска и принятия решений. — М.: Аспект Пресс, 2003.

4.2.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. *Խմբում արդյունավետ որոշման ընդունման մարտահրավերները:*
2. *Խմբում որոշման ընդունման էֆեկտները:*

Թեմա 4.3 Խմբային որոշման ընդունման մեթոդները:

Սիներգետիկ էֆեկտի հիմնական սկզբունքները եւ «Ուղեղային գրոհի» մեթոդը: «Ուղեղային գրոհի»-ի հիմնական տարատեսակները, կազմակերպման հիմնական պահանջները եւ սպասվելիք արդյունքները: «SWOT» վերլուծության հիմնական մեխանիզմներն ու առանձնահատկությունները:

Ինքնուրույն աշխատանք

3.3.1 Մենագրությունների ուսումնասիրում

1. Козелецкий, Ю. Психологическая теория решений. – М.: Прогресс, 1979.
2. Литвак Б. Г. Экспертные оценки и принятие решений.- М.: Патент, 1996. - 271 с.

3.3.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. «Ուղեղային գրոհ»-ի մեթոդը:
2. Ուղեղային գրոհի կիրառումը կառավարչական ոլորտում եւ նրա ընձեռած հնարավորությունները:

Լրացուցիչ գրականություն

1. Հայրապետյան Դ. Ռ. Ուղեղային գրոհը որպես կրեատիվ պոստե-ցիալի զարգացման տեխնիկա - Կանթեղ Գիտական հոդվածների ժողովածու 2(27) Երեւան, 2006 թ., էջ 209-214:
2. Раскрепощенный менеджер. М., Экономика, 1991.
3. Скотт П. Психология оценки и принятия решения. - М.,1998.

ԲԱԺԻՆ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

«Որոշման ընդունման հոգեբանություն» առարկայի սահմաններում իրականացվող գործնական աշխատանքների հիմնական նպատակներն են.

- ամրապնդել տեսական նյութը եւ ստուգել դրա յուրացման աստիճանը,
- կոնկրետ իրավիճակների վերլուծության եւ քննարկման միջոցով գործնականում յուրացնել որոշման ընդունման կառավարման եւ ուղղորդման առանձնահատկությունները,
- սովորել կիրառել որոշման ընդունման կառավարման մեթոդները ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակում,
- ուսումնասիրել խմբային որոշման առանձնահատկություններն ու օրինաչափությունները ինքնադիտման եւ խմբային քննարկումների միջոցով:

Գործնական վարժությունները, թեստերն ու խաղերը հիմնականում ընդգրկում են ծրագրի շրջանակներում ուսումնասիրվող թեմաները ու ուղղված են քննարկվող հիմնախնդիրների կիրառական կողմերի բացահայտմանը:

Գործնական աշխատանքները ենթադրում են ուսանողի ակտիվությունը ոչ միայն լսարանում, այլև ընդգրկում են բազմազան առաջադրանքներ, որոնք պահանջում են արտալսարանային ինչպես անհատական, այնպես էլ խմբային ինքնուրույն աշխատանք:

Աշխատանքների ընթացքը, հիմնական արդյունքներն ու դրանց վերլուծությունը գրանցվում են ուսանողների կողմից կազմվող անհատական եւ խմբային արձանագրություններում, որը հնարավորություն է ընձեռում դասընթացի ավարտին քննարկել հիմնական ձեռքբերումներն ու բացթողումները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ԹԵՄԱ 1)

Գործնական խաղ «Հանգիստ ջրի վրա»

Բովանդակությունը.

Այս խաղը արտաքին միջավայրի պատահական ազդեցությունների պայմաններում կառավարչական որոշումների ընունման դասական օրինակ է: Լավագույն ռազմավարությունը կարող է ձեռարկվել բազմաթիվ համակարգչային գիտափորձերի միջոցով:

Վարժություն «Երեք տնային տնտեսուհի»

Բովանդակությունը.

Նպատակն է խմբային քննարկման արդյունքում գտնել ոչ այնքան մաթեմատիկական ճիշտ լուծում, այլ ընդհանուր համաձայնեցված պատասխան եւ այն փաստարկել խմբում:

Թեստ «Բարդ տեխնիկական նախագծի մշակման եւ իրագործման փուլերը»

Բովանդակությունը.

1. Ինքնուրույն որոշել բարդ տեխնիկական նախագծի մշակման եւ իրագործման փուլերի հերթականությունը:
2. Փոքր խմբերում (3-5 հոգի) մշակել նախագծի իրագործման համատեղ խմբային որոշում:
3. «Խորհրդատուների կարգ»՝ օգտվել դասախոսի օգնություններից:
4. Սահմանել անհատական, խմբային եւ միջին խմբային որոշումների որակական ցուցանիշները՝ հաշվելով «խորհրդատուի կարգից» գումարային շեղումը:

Մեթոդ «635»

Բովանդակությունը.

Տրվում է որոշակի արտադրական իրավիճակ, որից հետո առաջարկվում է բաժանվել վեց հոգանոց խմբերի, հինգ րոպեում մշակել լուծման երեք հնարավոր տարբերակներ: Հինգ րոպե հետո մասնակիցները փոխանակում են իրենց աշխատանքի արդյունքները եւ լրամշակում:

Աշխատանքի նպատակները.

- «ուղեղային գրոհի» տարբերակներից մեկի հետ գործնական ծանոթացում,
- որոշման մշակման խմբային հմտությունների ձեւավորում,
- որոշման մշակման եւ ներդրման ընթացքում կոնֆլիկտների նվազեցման մեթոդների յուրացում:

Քեյս «Լիության կողմնակիցները»

Բովանդակությունը.

1. ցուցափեղկերի ձեւավորում,
2. գնորդների ներգրավում խանութ,
3. գնորդների նախնական սպասարկում,
4. գնորդների վարքի դիտման մեթոդներ,
5. աշխատակազմի ընտրություն,
6. գնորդների եւ վաճառողների տիպաբանություն,
7. գնորդի հետ աշխատանքի մեթոդներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ԹԵՄԱ 3)

Թեստ «Չետաքրքրությունների կորպորատիվ նույնականություն»

Բովանդակությունը.

Ֆիրմային նշանաբանների նշանակության, գործառույթների եւ առանձնահատկությունների քննարկում: Քննարկումն անց է կացվում փոքր խմբերում (5-6 հոգի): Յուրաքանչյուր խումբ ընտրում է ինչ-որ կազմակերպություն եւ վերլուծում նրա նշանաբանը եւ դրա հետ կապված յուրաքանչյուր գործառույթ: Հանձնարարվում է հաջորդ դասի համար մշակել տվյալ աշխատանքային խմբի նշանաբանը եւ ներկայացնել հաստատման:

Քեյս «Հայր-Ֆեոդոր»

Բովանդակությունը.

Ձեւակերպել Հայր-Ֆեոդորի նպատակները, կազմել, նպատակների ծառի մոդել:

Աշխատանքի նպատակները.

- սովորել ճանաչել հիմնական եւ ածանցյալ նպատակները,
- կարողանալ ճկուն անցում կատարել մի նպատակից մյուսին՝ պատկերացնելով նպատակների հիերարխիան:

Գործնական խաղ «Փորձագետ»

Բովանդակությունը.

Ուսումնասիրվում է իրավիճակ ֆիրմային ինչ-որ ենթակառուցվածքում՝ հետեւյալ գործոնների հիման վրա. կոլեկտիվի որակը, նրա բավարարվածության որակը եւ ազատման պատրաստակամությունը (հնարավորությունը): Դրա համար յուրաքանչյուր գործոնների վերաբերյալ մի շարք հարցեր են տրվում: Ստացված ինֆորմացիայի հիման վրա անհրաժեշտ է կառուցել կառավարչական որոշում, որը կոչված է բարելավել ստեղծված իրավիճակը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ԹԵՄԱ 4)

Ֆիրմայի ներուժի ուսումնասիրում «SWOT» վերլուծության օգնությամբ

Բովանդակությունը.

Գնահատվում են կազմակերպության ուժեղ եւ թույլ կողմերը: Գնահատվում են կազմակերպության զարգացման ուղղությունները եւ վտանգները: Կառուցվում է «SWOT» վերլուծության ամփոփիչ աղյուսակ:

«Մտային քարտեզավորման» մեթոդ

Բովանդակությունը.

Աշխատանքի ընթացքում ուսանողները սովորում են կազմել մտային քարտեզներ եւ անհատական մակարդակում որոշում ընդունել իրենց կողմից ստեղծված այլընտրանքների հիման վրա՝ գնահատելով դրանց ուժեղ եւ թույլ կողմերը:

«Ուղեղային գրոհի» մեթոդ


Բովանդակությունը.

Մեթոդը հանդիսանում է խմբային որոշման ընդունման դասական մեթոդներից մեկը: Անց է կացվում մի քանի տարատեսակներով՝ ժամանակային եւ գործառութային տարաբաժանման սկզբունքների հիման վրա:

ԲԱԺԻՆ 3

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԹԵՍԱՅԻՆ ԱՈՈՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. Գրիկներգը եւ Ռոբբիսը սահմանել են որոշման ընդունման ռացիոնալ մոդելի հետեւյալ ալգորիթմը. *(լրացնել բաց թողնված վանդակները: Յուրաքանչյուր տարբերակ 0,5 միավոր):*



2. Բացի որոշման ընդունման ռացիոնալ մոդելից՝ գիտնականներն առանձնացնում են նաեւ հետեւյալ մոդելները. *(ճիշտ պատասխանը 0,5 միավոր)*

- ա/ բավարարող այլընտրանքներով որոշման ընդունում,
- բ/ իմպլիցիտ նախընտրելի այլընտրանքի սկզբունքով որոշման ընդունում,
- գ/ երկու պատասխաններն էլ ճիշտ են,

դ/ երկու պատասխաններն էլ սխալ են:

3. Որոշման ընդունման որակի կախվածությունը սուբյեկտի ինտելեկտուալ պոտենցիալից սահմանվում է որպես _____

_____ (շարունակել նախադասությունը: 1 միավոր):

4. Եթե ինֆորմացիոն որոշումների ընդունման ժամանակ որոշման ընդունումն ուղղված է իրավիճակի ճանաչմանը, իսկ օպերատիվ որոշումների ընդունման ժամանակ որոշումներն ուղղված են իրավիճակի կառավարման միջոցների ընտրությանը, ապա կազմակերպչական որոշումների կայացման ժամանակ սուբյեկտի ընտրությունը որոշարկում է, թե _____

_____ (սահմանել կազմակերպչական որոշումների կայացման խնդիրը: 1 միավոր):

5. Սահմանել իրվինգ Ջենիսոնի կողմից առաջարկված «խմբային մտածողության» էֆեկտը *(1 միավոր):*

6. Թվարկել խմբային որոշման ընդունման առավելությունները եւ թերությունները *(2 միավոր):*

Առավելությունները	Թերությունները
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____

7. Տրված է որոշման ընդունման իրավիճակ. «Դուք պետք է ընտրեք, թե որտեղ պետք է անցկացնեք Ձեր ամառային արձակուրդը»

դը»: Ընդունեք որոշում համաձայն բավարարող այլընտրանքներով որոշման ընդունման եւ իմպլիցիտ նախընտրելի այլընտրանքի սկզբունքով որոշման ընդունման (2 միավոր):

8. Տրված է որոշման ընդունման իրավիճակ. «Կարելու կորպորատիվ հանդիպման համար մշակել Ձեր կազմակերպության ներկայացուցչական հինգ թույլատրելի ելույթ»: Լուծել խնդիրը համաձայն անորոշության իրավիճակում որոշումների ընդունման R.A.W.S. մոդելի անորոշության ընդունման մարտավարությունների եւ անորոշության ճնշման մարտավարությունների (2 միավոր):

**«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՈԳԵՍՆՏՈՐՈՇՈՒՄ»
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՈՒՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկան դասավանդվում է Երեւանի պետական համալսարանի Փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի «Հոգեբանության տեսություն, անձի հոգեբանություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում՝ որպես կամընտրական դասընթաց: Առարկայի ուսուցանումը հիմնվում է «Փորձարարական հոգեբանություն», «Հոգեճանաչում» առարկաների սահմաններում ձեռքբերված գիտելիքների վրա:

Հոգեբանական ախտորոշումը, լինելով հոգեբանական գիտության անբաժանելի մասը, մեր օրերում դուրս է եկել զուտ գիտական ուսումնասիրության սահմաններից՝ դառնալով գործնական հոգեբանների, բժիշկների, մանկավարժների, սոցիոլոգների եւ «մարդաբանության» ոլորտի այլ հոգեբանների գործիք:

Վերոհիշյալ զարգացումները անհրաժեշտորեն սկիզբ տվեցին հոգեախտորոշման մի նոր ճյուղի՝ համակարգչային հոգեախտորոշմանը: Համակարգիչները ոչ միայն միջոց են հանդիսանում ամենատարբեր հաշվարկների կատարման համար, այլեւ թույլ են տալիս մոդելավորել հոգեբանական տարբեր տիպի հետազոտություններ: Հաշվի առնելով համակարգիչների անընդհատ աճող հնարավորությունները հաշվարկների, տրամաբանական օպերացիաների, հիշողության, արագագործության ոլորտներում, կարող ենք նշել, որ հոգեբանական թեստավորման մեթոդոլոգիական համակարգի բազմաթիվ սահմանափակումներ, որոնք կապված էին հետազոտողի հնարավորությունների հետ, հանվում են:

Համակարգչային հոգեախտորոշումը Էապես նվազեցնում է մարդկային գործոնի հետ կապված սխալների հավանականությունը՝

հետազոտողի հոգեհուզական վիճակը, նրա հետաքրքրվածությունը հետազոտական արդյունքների հանդեպ եւ այլն:

Ոչ պակաս կարեւոր է այն, որ հոգեախտորոշման ավտոմատացումը թույլ է տալիս անցկացնել զանգվածային հետազոտություններ:

Այսպիսով, առարկայի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել համակարգչային հոգեախտորոշման հիմնական սկզբունքներին, ներկայացվող պահանջներին, համակարգչային թեստավորման եւ հետազոտման ալգորիթմին, ամփոփիչ տվյալների կիրառման եւ ներկայացման սկզբունքներին:

Դասընթացի հաջող յուրացման արդյունքում ուսանողները կկարողանան.

- ինքնուրույն կազմակերպել եւ անցկացնել համակարգչային հոգեախտորոշիչ աշխատանքներ,
- համակարգչի միջոցով ուսումնասիրել անձի հոգեֆիզիոլոգիական, հոգեկան եւ սոցիալ-հոգեբանական երեւույթների լայն շրջանակ,
- վերլուծել ստացված ամփոփ արդյունքները, ներկայացնել դրանք եւ կազմել հետազոտության ամփոփ արձանագրություն:

Գիտելիքների ստուգման համակարգը:

Ուսումնական առարկայի գումարային արդյունքը ստացվում է հետեւյալ բաղադրիչներից.

- մասնակցություն դասերին (1 ժամը 0,125 միավոր: Ընդհանուր՝ 4 միավոր),
- թեստային ընթացիկ գրավոր ստուգումներ (յուրաքանչյուր աշխատանքը գնահատվում է 10 բալանոց համակարգով, թեստային յուրաքանչյուր բալը՝ 0,2 միավոր: Ընդհանուր՝ 4 միավոր),
- ինքնուրույն համակարգչային հետազոտության կամ թեստավորման անցկացում, դասի ժամանակ արձանագրության եւ տվյալների ներկայացում (ընդհանուր՝ 4 միավոր),
- ակտիվ մասնակցություն դասընթացներին եւ բանավոր հարցադրումներին (ընդհանուր՝ 2 միավոր):

- բանավոր ստուգարք (պատասխաններ ստուգողական հարցերին՝ 6 միավոր):

Առարկան ընդգրկում է 6 ժամ դասախոսություն եւ 26 ժամ գործնական աշխատանքներ, ինչպես նաեւ 58 ժամ ինքնուրույն աշխատանք: Առարկան մագիստրոսական ծրագրի շրջանակներում տրամադրում է 3 կրեդիտ:

ԲԱԺԻՆ 1

**«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՈՒՄ»
ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ**

	Թեմայի անվանումը	դաս.	ինքն.
1.1	Հոգեախտորոշման առարկան, խնդիրները, սկզբունքները, հնարավորությունները	2	4
1.2	Հոգեախտորոշիչ մուլտիմեդիոն համակարգեր, ադապտիվ թեստավորում	2	6
1.3	Հոգեախտորոշիչ տվյալների հենքերի ստեղծում, վերլուծություն: Ինտելեկտուալ համակարգեր:	1	6
1.4	Համակարգչային հոգեախտորոշմանը ներկայացվող հիմնական պահանջները	1	4

ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Հոգեախտորոշման առարկան, խնդիրները, սկզբունքները, հնարավորությունները

Մեթոդիկաների ավտոմատացումը որպես հոգեախտորոշման ժամանակակից հիմնախնդիր: Համակարգչային հոգեախտորոշման անհրաժեշտությունը եւ արդի մարտահրավերները: Համակարգչային հոգեախտորոշման ակունքները: Հոգեախտորոշման ընձեռած հնարավորությունները: Համակարգչային հոգեախտորոշման կազմակերպման, անցկացման, արդյունքների վերլուծության եւ ներկայացման հիմնական սկզբունքները: Համակարգչային հոգեախտորոշման վալիդությունն ու հուսալիությունը:

1.2 Հոգեախտորոշիչ մուլտիմեդիոն համակարգեր, ադապտիվ թեստավորում

Գիտափորձերի նոր տեսակներ: Թեստավորման ձայնային եւ պատկերային ուղեկցման համակարգեր: Ձայնը, գույնը, պատկերը՝ որպես հոգեախտորոշման որոշ համակարգերի անբաժանելի մաս: Ձայնային եւ գունային ազդակների մոդելավորման սկզբունքները: Ադապտիվ թեստավորման հասկացությունը եւ սկզբունքները: Կայուն եւ փուլային ադապտացմամբ թեստերի կառուցման սկզբունքները: Ժամանակը որպես հոգեախտորոշիչ գիտափորձի գործոն:

1.3 Հոգեախտորոշիչ տվյալների հենքերի ստեղծում, վերլուծություն: Ինտելեկտուալ համակարգեր:

Հոգեբանական տվյալների հենքեր: Հենքերի ստեղծման անհրաժեշտությունը հոգեբանական պրակտիկայում: Հոգեբանական հենքերի մոդելավորման եւ ստեղծման սկզբունքներն ու փուլերը: Տվյալների վերլուծություն եւ արխիվացում ստեղծված հենքերի բաժիններում: Տվյալների որոնում եւ արտածում: Ինտելեկտուալ համակարգեր: Կիրառական ինտելեկտուալ համակարգերի դասակարգումը:

1.4 Համակարգչային հոգեախտորոշմանը ներկայացվող հիմնական պահանջները

Համակարգչային հոգեախտորոշման էրգոնոմիկական պահանջները: Հետազոտության միջավայրի կարգավորում, հետազոտական գործիքների հետ աշխատանքի հմտությունները: Փորձարարական վահանակի, էկրանի եւ ձայնի համապատասխան կարգավորումները:

ԲԱԺԻՆ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՃԵԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՐԱՆՔՆԵՐ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

	Թեմայի անվանումը	դաս.	ինքն.
2.1	Համակարգչային հոգեախտորոշման միջավայրի ապահովում, տեխնիկական եւ էրգոնոմիկ պահանջների կատարման հմտություններ:	2	4
2.2	Գրանցում համակարգում, տվյալների բազայի ստեղծում, տվյալների պահպանում:	2	4
2.3	Չափերի, տարածության, ժամանակի ընկալման ուսումնասիրում:	2	2
2.4	Չգայաշարժողական համակարգի համակարգչային հոգեչափում: Պարզ եւ բարդ ռեակցիաների չափում: Տեսպահնգ թեստ:	2	4
2.5	Աշխատունակության ուսումնասիրում: Աշխատունակությունը տեղեկությոթի եւ ժամանակի սղության պայմաններում:	2	2
2.6	Չգայաշարժողական եւ մտավոր արգելադիմացկունության համակարգչային ուսումնասիրում:	2	2
2.7	Ուշադրության հիմնական հատկությունների չափման եւ գարգացման համակարգչային համակարգեր:	2	2
2.8	Վերբալ եւ ոչ վերբալ ինտելեկտի համակարգչային հոգեչափման մեթոդիկաներ:	2	4
2.9	Հիշողության տարբեր տեսակների մտապահման արագության, ծավալի, պահպանման, ամրության, համակարգչային հոգեախտորոշում	2	2

2.10	Հոգեկան եւ ֆիզիկական հոգեվիճակների հոգեչափողական համակարգեր	2	4
2.11	Անձնային որակների համակարգչային հոգեչափողական համակարգեր	2	2
2.12	Մասնագիտական կողմնորոշման եւ մասնագիտական գործունեության համակարգչային հոգեախտորոշում	2	2
2.13	Խմբային եւ ցանցային հոգեախտորոշում: Տվյալների միաժամանակյա ստացում եւ վերլուծություն: Տվյալների բազայից արդյունքների արտածում, մշակում եւ ներկայացում:	2	4

ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1 Համակարգչային հոգեախտորոշման միջավայրի ապահովում, տեխնիկական եւ էրգոնոմիկ պահանջների կատարման հմտություններ:

Հետազոտվողի համար էրգոնոմիկ պայմանների ստեղծում: Հոգեչափողական պարագաների դասավորում: Հետազոտվողի դիրքի կարգավորում: Էկրանի եւ ձայնի կարգավորման իրականացում: Հոգեախտորոշիչ համապատասխան ծրագրի միացում, արտաքին տեսքի (interface) կարգավորում: Համակարգչային հոգեախտորոշման նախնական հրահանգները:

2.2 Գրանցում համակարգում, տվյալների հենքի ստեղծում, տվյալների պահպանում:

Առաջնային գրանցում. նշանաբառի (login) եւ գաղտնաբառի (password) ստեղծում: Անձնական էջի (profile) ստեղծում եւ ձեւավորում: Տվյալների պահպանման համակարգի ստեղծում: Մի քանի էջերի ստեղծում, հենքի ձեւավորում: Բազմաբաժանորդային ցանցերի ստեղծման ալգորիթմը: Տվյալների հասցեավորում եւ վերահասցեավորում:

2.3 Չափերի, տարածության, ժամանակի ընկալման ուսումնասիրում:

2.3.1 Թեստ «Տուն»: Չափերի ընկալման ճշգրտություն:

Քննադատումը.

Թեստավորման սկզբում հետազոտվողին ցուցադրվում է երկրաչափական պատկերը՝ տան սխեման: Նրա բաղադրիչները հանդիսանում են ֆիգուր-ետալոններ թեստի յուրաքանչյուր 16 առաջադրանքներում: Պատասխանների տարբերակների շարքում այդ առաջադրանքներում ներկայացվում են իրարից եւ ֆիգուր-ետալոնից էապես չտարբերվող ֆիգուրներ: Ընկալման ճշգրտության գնահատումը կատարվում է ֆիգուրների միջեւ համապատասխանության հաստատման արդյունավետության հիման վրա: Աջքաջափի մարզում:

Չափանիշները.

Չափերի ընկալման ճշգրտություն:

Տույց է տալիս հետազոտվողի երկրաչափական պատկերների չափերն ընկալելու ընդունակությունը: Չափվում է ճիշտ պատասխանների ընդհանուր թվի տոկոսային հարաբերությամբ:

Աշխատանքի ժամանակը:

Տրվում է թեստի կատարման վրա ծախսված ժամանակը վայրկյաններով: Կարող է ընդունել ցանկացած դրական արդյունք, քանի որ թեստի տեւողության վրա ոչ մի սահմանափակում չկա:

2.3.2 Թեստ «Ճշգրիտ ժամանակի բյուրո»: Տարածության ընկալման ճշգրտություն:

Քննադատումը.

Այս թեստում հետազոտվողին ներկայացվում է մեխանիկական ժամացույցի թվատախտակ՝ ամեն անգամ տարածության մեջ կողմնորոշված տարբեր ձեւով՝ ընդ որում յուրաքանչյուր անգամ թվատախտակի վրա կա միայն մեկ նշում: Հետազոտվողի խնդիրն է

որոշել ճշգրիտ ժամը եւ թույլ 42 հարցերից յուրաքանչյուրում: Ամբողջ թեստի կատարման համար տրվում է 10 թույլ:

Չափանիշները.

Տարածության ընկալման ճշգրտություն:

Չափում է հետազոտվողի տարածության ճշգրիտ ընկալման ընդունակությունը: Չափվում է ճշգրիտ եւ ընդհանուր հարցերի տոկոսային հարաբերությամբ:

2.3.3 Թեստ «Ձկնորսություն»: Ժամանակի ընկալման ճշգրտություն:

Քննադատումը.

Որպես էտալոնային ժամանակահատվածի տեսողական փոխաբերություն թեստում օգտագործվում է պարզ ջրում ձկան շարժումը մինչեւ եղեգների մեջ թաքնվելը:

Ապա նույնքան ժամանակահատված անց, որը հետազոտվողը չափում է սեփական զգայություններով, նա պետք է սեղմի ստեղնաշարի կամ մկնիկի կոճակը: Այն դեպքում, երբ ինտերվալի չափումը կատարվել է այնպիսի շեղմամբ, որը չի գերազանցում ճշգրտության հաստատված չափը, ձկնորսը բռնում է ձուկը: Ընդհանուր առմամբ թեստը բաղկացած է 10 փորձից:

Չափանիշները.

Ժամանակի ընկալման ճշգրտություն:

Հաշվարկվում է հավասար տեւողությամբ ժամանակային ինտերվալների որոշման արդյունավետությամբ: Չափվում է տոկոսներով:

Ժամանակի ընկալման ճշգրտություն (հավաք):

Յուրաքանչյուր փորձի համար տրվում է նաեւ ռեակցիայի տեւողության տոկոսային շեղումը էտալոնայինից:

**2.4 Չգայաշարժողական համակարգի համակարգչային հոգե-
չափում: Պարզ եւ բարդ ռեակցիաների**

2.4.1 Թեստ «Յրաձգարան»: Պարզ տեսաշարժողական ռեակ-
ցիայի արագությունը:

Բնութագրումը.

Այս թեստի գլխավոր գործող անձը նետաձիգն է, որի հիմնական խնդիրն է նրա առջեւ տեղակայված նշանակետի գույնը փոխվելու ժամանակ ինչքան հնարավոր է շուտ բաց թողնել աղեղը: Թեստը կազմված է 10 փորձից:

Չափանիշները.

Պարզ տեսաշարժողական ռեակցիայի ժամանակը:

Ցույց է տալիս տեսողական գրգռիչի հանդեպ հետազոտվողի ռեակցիայի միջին ժամանակահատվածը: Չափվում է միլիվայրկյան-ներով:

Պարզ տեսաշարժողական ռեակցիայի ժամանակը (հավաք):

Բոլոր տեսաշարժողական ռեակցիաների ժամանակահատված-ների հավաքը:

2.4.2 Թեստ «Մենամարտ»: Պարզ ձայնաշարժողական ռեակ-
ցիայի արագությունը:

Բնութագրումը.

Այս թեստում մասնակցում են երեք հոգի՝ վկան եւ երկու մենա-
մարտողներ, որոնցից մեկը հետազոտվողն է: Նրա հիմնական խնդիրն է ինչքան հնարավոր է շուտ հակազդել վկայի կրակոց-նշա-
նին: Այն պարագայում, երբ ռեակցիայի ժամանակը փոքր է տրված շեմից (220մվ.) մենամարտողը հաղթում է, հակառակ դեպքում՝ պարտվում: Թեստը կազմված է 10 փորձից:

Չափանիշները.

Պարզ ձայնաշարժողական ռեակցիայի ժամանակը:

Ցույց է տալիս ձայնային գրգռիչի հանդեպ հետազոտվողի

ռեակցիայի միջին ժամանակահատվածը: Չափվում է միլիվայրկյան-ներով:

Պարզ ձայնաշարժողական ռեակցիայի ժամանակը (հավաք):

Բոլոր ձայնաշարժողական ռեակցիաների ժամանակահատ-
վածների հավաքը:

2.4.3 Թեստ «Տաքսի»: Բարդ տեսաշարժողական ռեակցիայի
արագություն:

Բնութագրումը.

Այս թեստի իրականացման ժամանակ հետազոտվողը պետք է ինչքան կարելի է արագ հակազդի դեղին գույնի մեքենայի հայտնվե-
լու ժամանակ: Այսպիսով այստեղ հակազդման ցուցանիշ է հանդի-
սանում ոչ միայն մեքենայի հայտնվելու ժամանակը, այլև նրա գույ-
նը: Տասը դեղին մեքենա բաշխված են քսան այլ մեքենաների միջև: Թեստի ժամանակ ցուցադրվող մեքենաների ընդհանուր քանակը երեսունն է:

Չափանիշները.

Բարդ տեսաշարժողական ռեակցիայի ժամանակը:

Ցույց է տալիս բարդ տեսողական գրգռիչի հանդեպ հետազոտ-
վողի ռեակցիայի միջին ժամանակահատվածը: Չափվում է միլի-
վայրկյաններով:

Բարդ տեսաշարժողական ռեակցիայի ժամանակը (հավաք):

Բոլոր բարդ տեսաշարժողական ռեակցիաների ժամանակա-
հատվածների հավաքը:

2.4.4 Թեստ «Կասկադյոր»: Շարժվող օբյեկտի հանդեպ ռեակ-
ցիայի ճշգրտություն:

Բնութագրումը.

Ուղղված լինելով շարժումների ճշգրտության, դինամիկ աչքա-
չափի եւ հիմնական նյարդային գործընթացների հավասարակշռու-
թյան գնահատմանը՝ թեստը հետազոտվողին տեղափոխում է նկա-
րահանման հրապարակ կասկադյորի դերում հանդես գալու համար:

Շարժվող օբյեկտի դերում հանդես է գալիս մեքենան, ուր կասկադյորը պետք է ցատկի, երբ այն հատում է ճանապարհի վրայի նշանագիծը:

Թեստում առաջարկվում են 20 թռիչքներ:

Չափանիշները.

Շարժվող օբյեկտի հանդեպ ռեակցիայի ժամանակը:

Որոշվում է զգայաշարժողական ազդեցության ճշգրտությունը նախորդող եւ ուշացող ռեակցիաների ժամանակների գումարմամբ: Արտահայտվում է միլիվայրկյաններով:

Նախորդող ռեակցիաների քանակ:

Ցույց է տալիս հետազոտվողի ռեակցիաների քանակը, որոնք նախորդում են գլխավոր իրադարձությանը: Կարող է օգտագործվել որպես կենտրոնական նյարդային համակարգի գրգռողական գործընթացների ցուցանիշ:

Ուշացող ռեակցիաների քանակ:

Ցույց է տալիս հետազոտվողի ռեակցիաների քանակը, որոնք հաջորդում են գլխավոր իրադարձությանը: Կարող է օգտագործվել որպես կենտրոնական նյարդային համակարգի արգելակման գործընթացների ցուցանիշ:

Շարժվող օբյեկտի հանդեպ ռեակցիայի ժամանակը (հավաք):

Շարժվող օբյեկտի նկատմամբ ռեակցիաների բացարձակ նշանակությունների հավաքը միլիվայրկյաններում:

2.4.5 Թեստ «Փայտփորիկ»: Տեպաինգ թեստ. նյարդային համակարգի ուժը եւ շարժունությունը:

Բնութագրումը.

Չետազոտվողի կողմից Enter ստեղի սեղմման ժամանակ, փայտփորիկը կտցահարում է Էկրանի վրա նկարված կոճակը, իսկ բաց թողնելու դեպքում վերադառնում սկզբնական վիճակի: Թեստը տեւում է երկու րոպե, որի ավարտին Էկրանի վրա դուրս են բերվում արդյունքները: Թեստի յուրահատկությունից կախված նշված ինստերվալում աշխատանքը դադարեցնելու պարագայում միջանկյալ արդյունքները չեն հաշվարկվում:

Չափանիշները.

Դինամիկ աշխատունակության ցուցանիշ:

Ցուցանիշը ներկայացնում է անսահմանափակ մեծություն, որը արժեք է ընդունում 0-ից 500 միջակայքում, որը հաշվարկվում է յուրաքանչյուր 10 վայրկյանում կատարված սեղմումների թվով:

Շարժողական համակարգի լաբիլություն:

Տասը բալանոց մեծություն, որը հաշվարկվում է առաջին 10 վայրկյաններում տեպաինգի միջին հաճախության հիման վրա: Փորձարարական տվյալները վկայում են, որ առաջատար ձեռքով կատարվող շարժումները միջինում տատանվում են 58-ից 83 հարված:

Յուրաքանչյուր 10 վայրկյանում սեղմումների քանակություն:

Տասներկու նշանակություններով հավաք, որոնցից յուրաքանչյուրը հավասար է ամեն 10 վայրկյանում կատարված սեղմումների քանակին:

Նյարդային համակարգության տիպը:

Կարող է ընդունել երեք արժեք՝ «ուժեղ», «միջին», «թույլ»՝ կախված դինամիկ աշխատունակության ցուցանիշից:

2.5 Աշխատունակության ուսումնասիրում: Աշխատունակությունը տեղեկույթի եւ ժամանակի սղության պայմաններում:

2.5.1 Թեստ «Փոստում»: Աշխատունակությունը ժամանակի դեֆիցիտի պարագայում:

Բնութագրումը.

Ժամանակի դեֆիցիտը մոդելավորվում է կոնվեյերի միջոցով, որի վրայով շարժվում են չափերով եւ գույնով տարբերվող ծրարներ: Ենթադրվում է, որ հետազոտվողը յուրաքանչյուր ծրար պետք է ուղարկի երեք արկղերից ինչ-որ մեկի մեջ համաձայն կանոնների: Ճշգրիտ եւ ժամանակային պատասխանի դեպքում նամակների շարժման արագությունը աճում է, հակառակ դեպքում՝ նվազում:

Այսպիսով, ժամանակի դեֆիցիտը հետազոտվողից պահանջում է արագ վերլուծել իրավիճակը, ընդունել որոշում եւ առանց տատանվելու այն իրագործել: Ժամանակի պակասից առաջադրանքի խա-

փանման վտանգը առաջ է բերում հուզական լարվածության աճ: Թեստի գնահատումը կատարվում է հաջող իրականացված փորձերի միջին ժամանակի հաշվարկով:

Չափանիշները.

Ցուցադրման միջին ժամանակը:

Մեծություն, որը ցույց է տալիս հետազոտվողի բոլոր պատասխանների լատենտ փուլերի միջին ժամանակը: Չափվում է միլիվայրկյաններով:

Ճշգրիտ պատասխանների քանակը:

Չետազոտվողների մոտ ճշգրիտ եւ ժամանակին ընդունված որոշումների քանակը ֆիքսող մեծություն:

Ցուցադրման ժամանակի մեծություն (հավաք):

Բոլոր ռեակցիաների ժամանակահատվածը միլիվայրկյաններով: Բաց թողնված եւ սխալ պատասխանների տեղում ֆիքսվում է գրո եւ մշակվում համապատասխան ձեռով:

2.6 Չգայաշարժողական եւ մտավոր արգելադիմացկունության համակարգչային ուսումնասիրում:

2.6.1 Թեստ «Լուսացույց»: Չգայաշարժողական արգելադիմացկունություն:

Բնութագրումը.

Այս թեստի անցկացման ժամանակ, հետազոտվողը մեքենա է դեկավարում, որն անցնում է խաչմերուկով եւ պետք է հակազդի ստեղների սեղմամբ՝ կախված լուսացույցի ազդակի գույնից: Թեստն անց է կացվում վեց ռոպեի ընթացքում, ընդ որում կենտ ռոպեներին հետազոտվողն աշխատում է առանց խոչընդոտների, զույգերն՝ խոչընդոտներով: Թեստի դադարեցման պարագայում միջանկյալ արդյունքները կարող են հաշվարկվել, եթե թեստն անց է կացվել առնվազն երկու ամբողջական ռոպե:

Չափանիշները.

Առանց խոչընդոտների ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը:

Չետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների միջին նշանակությունը խոչընդոտների բացակայության ժամանակ (մվ):

խոչընդոտներով ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը:

Չետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների միջին նշանակությունը խոչընդոտների առկայության ժամանակ (մվ):

Արգելադիմացկունության գործակիցը:

Առանց խոչընդոտների ազդակներին հակազդումների ժամանակի հարաբերությունը խոչընդոտներով ազդակներին ռեակցիաների ժամանակին՝ արտահայտված տոկոսներով: Այսպիսով այս ցուցանիշը մեծ է 100%-ից, եթե հետազոտվողը խոչընդոտների առկայության դեպքում ավելի արագ է հակազդել եւ փոքր՝ հակառակ պարագայում:

Միայնների ընդհանուր քանակ:

Ամբողջ դրական թիվ, որը երկու ռեժիմներով աշխատանքի ժամանակ սխալ հակազդումների թվաքանակն գումարն է:

Առանց խոչընդոտների ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը (հավաք):

Չետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների բոլոր անհատական նշանակությունները խոչընդոտների բացակայության ժամանակ (մվ):

խոչընդոտներով ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը (հավաք):

Չետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների բոլոր անհատական նշանակությունները խոչընդոտների առկայության ժամանակ (մվ):

2.6.2 Թեստ «Քնություն»: Մտավոր աշխատունակության արգելադիմացկունություն:

Բնութագրումը.

Երկսիմվոլանի տառաթվային համադրությունների հավաքից

հետազոտվողին առաջարկվում է ընտրել այն, որը համապատասխանում է տրված էտալոնին: Թեստն անց է կացվում վեց րոպեների ընթացքում, ընդ որում կենտ րոպեների ընթացքում հետազոտվողն աշխատում է առանց խոչընդոտների, գույգերի ժամանակ՝ խոչընդոտներով: Թեստի դադարեցման ընթացքում միջանկյալ արդյունքները կարող են հաշվարկվել, եթե թեստն անց է կացվել առնվազն երկու ամբողջական րոպե:

Չափանիշները.

Առանց խոչընդոտների ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը:

Հետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների միջին նշանակությունը խոչընդոտների բացակայության ժամանակ (մվ):

խոչընդոտներով ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը:

Հետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների միջին նշանակությունը խոչընդոտների առկայության ժամանակ (մվ):

Արգելադրման ցուցանիշի գործակիցը:

Առանց խոչընդոտների ազդակներին հակազդումների ժամանակի հարաբերությունը խոչընդոտներով ազդակներին հակազդումների ժամանակին՝ արտահայտված տոկոսներով: Այսպիսով այս ցուցանիշը մեծ է 100%-ից եթե հետազոտվողը խոչընդոտների առկայության դեպքում ավելի արագ է հակազդել եւ փոքր՝ հակառակ պարագայում:

Սխալների ընդհանուր քանակ:

Ամբողջ դրական թիվ, որը երկու ռեժիմներով աշխատանքի ժամանակ սխալ հակազդումների թվաքանակն գումարն է:

Առանց խոչընդոտների ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը (հավաք):

Հետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների բոլոր անհատական նշանակությունները խոչընդոտների բացակայության ժամանակ (մվ):

խոչընդոտներով ազդակների նկատմամբ ռեակցիայի ժամանակը (հավաք):

Հետազոտվողի ռեակցիաների լատենտ շրջանների բոլոր անհատական նշանակությունները խոչընդոտների առկայության ժամանակ (մվ):

2.7 Ուշադրության հիմնական հատկությունների չափման եւ զարգացման համակարգչային համակարգեր:

2.7.1 Թեստ «Հետախույզ»: Ուշադրության ծավալի հոգեբանական թեստավորում:

Բնութագիրը:

Չգուշացնող ձայնային ազդակից հետո հետազոտվողին ցուցադրվում է «ռազմական քարտեզ» օդանավակայանների նշանակումներով: Անհրաժեշտ է հիշել դրանց տեղադրությունը եւ քարտեզի կորստից անմիջապես հետո մկնիկի օգնությամբ վերականգնել պատկերը: Օդանավակայանների քանակությունը աճում է մինչեւ ինը այնքան ժամանակ, քանի դեռ հետազոտվողը երկու անգամ չի սխալվում: Երկու սխալից հետազոտությունը դադարում է եւ կարելի է ստանալ արդյունքը:

Չափանիշները:

Ուշադրության ծավալ:

Ցույց է տալիս, թե քանի օբյեկտ է հիշվում հետազոտվողի կողմից միաժամանակ՝ կախված ցուցադրման ժամանակից (500մվ) եւ հետազոտվողի հմտություններից:

Սխալների ընդհանուր քանակ:

Սխալների քանակը կարող է լինել 2, 1 կամ 0: Երկու սխալից հետո թեստի անցկացումը ավարտվում է:

Բալային գնահատական:

Ուշադրության ծավալը գնահատվում է տասը բալանոց սանդղակով՝ ճիշտ լրացված օդանավակայանների քանակով:

2.7.2 Թեստեր «Շուլտեի աղյուսակները», Բուրդոնի «Կորրեկտուր փորձի» համակարգչային տարբերակները:

2.7.3 Վարժություն «Մորեխ»: Ուշադրության կայունության մարզում եւ զարգացում:

Բնութագիրը:

Այս վարժության ժամանակ «մորեխը» թռչկոտում է դաշնամուրի ստեղների վրայով՝ արձակելով տարբեր ձայներ: Հետագուտվողը պետք է լսի, ապա հրահանգից հետո հետելի նրա թռիչքների հետագծին: Նա կարող է թռչել միայն հարեւան ստեղի վրա: Եթե թվում է, որ մորեխը թռել է 4-րդ ստեղի վրա, ապա պետք է սեղմել Enter կոճակը:

Վարժության ավարտին հետագուտվողը պետք է նշի այն համարի ստեղը, որի վրա մորեխը կանգ է առել վերջում:

Չափանիշները:

Ուշադրության կենտրոնացվածության եւ կայունության գնահատում:

Ստղական անալիզատորի աշխատանքի լարման ժամանակ ուշադրության կենտրոնացվածությունը եւ կայունությունը գնահատվում են բալերով, ճիշտ ընտրված քայլերի քանակով՝ թեստի բարդության մակարդակի հաշվարկով:

2.8 Վերբալ եւ ոչ վերբալ ինտելեկտի համակարգչային հոգեչափման մեթոդիկաներ

2.8.1 «Արագիլ» փաթեթ:

«Արագիլ» փաթեթը նախատեսված է 14-60 տարեկան անձանց ինտելեկտուալ զարգացման մակարդակը չափելու համար: Կազմված է ինը ենթաթեստից, որոնցից յուրաքանչյուրը ուղղված է ինտելեկտի տարբեր գործառնությունների չափմանը եւ կարող է օգտագործվել որպես առանձին միաչափ թեստ, իսկ միասին որպես բազմաչափ պրոֆիլային թեստ:

«Արագիլ» փաթեթը օժտված է ընթացիկ եւ պրոգնոստիկ վալիդությանը եւ թույլ է տալիս կարճ ժամանակում գնահատել.

- ընդհանուր ինտելեկտի զարգացման մակարդակը (IQ),

- վերբալ ինտելեկտի զարգացման մակարդակը,
- ոչ վերբալ ինտելեկտի զարգացման մակարդակը
- առանձին ենթաթեստերի կատարման հաջողությունից կախված ինտելեկտի կառուցվածքը:

Ենթաթեստերը:

- **Նախադասությունների ավարտում:** Տրամաբանական մտածողություն, վերբալ ինտելեկտ:
- **Բառերի բացառում:** Համակցական ընդունակություններ, բառային հասկացությունների հետ գործառնում:
- **Բառերի հարաբերություններ:** Տրամաբանական հարաբերություններ, համակցական ընդունակություններ:
- **Ընդհանուր իմաստ:** Ինդուկտիվ մտածողություն, դասակարգում, դատողություն, մտահանգում:
- **Թվաբանական առաջադրանքներ:** Մաթեմատիկական մտածողություն, մաթեմատիկական ընդունակություններ:
- **Շարքի շարունակում:** Թվերի շարք, մաթեմատիկական տրամաբանություն:
- **Երկչափ ֆիգուրներ:** Երեւակայություն, պատկերավոր մտածողություն, ակնառու-պատկերավոր մտածողություն:
- **Եռաչափ ֆիգուրներ:** Առաջադրանք խորանարդիկների հետ՝ երեւակայություն, մտածողություն, ինտելեկտ:
- **Բառերի մտապահում:** Գիտելիքներ՝ արտածում եւ գործառնություն, ուշադրության եւ հիշողության առաջադրանքներ:

2.9 Հիշողության տարբեր տեսակների, ծավալի, պահպանման ամրության, մտապահման արագության համակարգչային հոգեախտորոշում:

Թեստավորումը թույլ է տալիս ուսումնասիրել.

- **Թվերի մտապահում:** Թվերի մեխանիկական մտապահման ծավալի ուսումնասիրման համակարգչային մեթոդներ:
- **Վանկերի մտապահում:** Վանկերի մեխանիկական մտապահման ծավալը:

- *Խմաստային տեսողական հիշողություն: Լսողական իմաստային հիշողության ծավալի ուսումնասիրման համակարգչային թեստ:*
- *Տրամաբանական հիշողության ծավալի համակարգչային չափում:*
- *Օպերատիվ հիշողության ծավալի չափման համակարգչային մեթոդիկա:*
- *Մեխանիկական մտապահման արագության համակարգչային չափում:*
- *Պատկերների մտապահման արագության համակարգչային չափում:*
- *Մեխանիկական մտապահման ճշգրտության չափման համակարգչային մեթոդիկա:*
- *Բառերի մտապահման ճշգրտության չափման համակարգչային մեթոդիկա:*
- *Իրար հետ չկապակցված բառերի զույգերի ճշգրտության չափում:*
- *Պատկերների մտապահման ճշգրտության չափումը համակարգչային մեթոդներով:*

2.10 Հոգեկան եւ ֆիզիկական հոգեվիճակների համակարգչային հոգեախտորոշիչ համակարգեր

Ընթացիկ վիճակի ստուգման թեստավորում.

- *Լյուշերի գունային թեստը: Գնահատման որակական բնութագրով համակարգչային հոգեդիախտորոշիչ համակարգ: Գունային թեստավորումը համակարգչային հոգեախտորոշման մեջ:*
- *Ինքնազգացողություն, ակտիվություն, տրամադրություն՝ էքսպրես ախտորոշում:*
- *Իրավիճակային տազնապայնության համակարգչային հոգեախտորոշում:*
- *Դպրոցականների եւ մեծահասակների ֆիզիկական վիճակի համակարգչային հոգեախտորոշում:*

- *Նյարդահոգեկան լարվածության գնահատման համակարգչային մեթոդիկաներ:*

2.11 Անձնային որակների համակարգչային հոգեախտորոշական համակարգեր:

Անձնային որակների համակարգչային հոգեախտորոշիչ թեստերը հիմնականում բլանկային թեստերի համակարգչայնացված տարբերակներ են: Վերջիններս թույլ են տալիս ազատվել տվյալների վերլուծության բարդ բանալիներից եւ տրամադրում են արդեն պատրաստի սթենային տվյալներ:

Գոյություն ունեն նաեւ անձնային թեստերի որոշ տարատեսակներ, որոնք մոդելավորվում են ադապտիվ թեստավորման սկզբունքների համաձայն:

Անձնային թեստերի համակարգչային ծրագրեր.

- *Կետտելի PF-16 հարցարան:*
- *Կետտելի CPQ թեստը:*
- *Ստրեյաուի հարցարանը: Նյարդային համակարգության ուժը, հավասարակշռությունը եւ շարժունությունը:*
- *Այգենկի հարցարանը մեծահասակների եւ դեռահասների համար:*
- *Ձեռքբերումների դրդապատճառայնության թեստը:*

2.12 Մասնագիտական կողմնորոշման եւ մասնագիտական գործունեության համակարգչային հոգեախտորոշում:

Մասնագիտական կողմնորոշման եւ մասնագիտական գործունեության համակարգչային հոգեդիագնոստիկական պայմանականորեն կարող ենք բաժանել երեք հիմնական ուղղությունների:

2.12.1 Մասնագիտական ընդունակությունների բացահայտում:

- *Ադմինիստրատիվ ընդունակությունների բացահայտում:*
- *Ստեղծագործական ներուժի հոգեախտորոշում:*

- *Ինքնահամոզվածության գնահատում:*
- *Կառավարչական ընդունակությունների բացահայտում:*

2.12.2 Ոչ սպեցիֆիկ անձնային որակների գնահատումը:

- *Հաջողության դրդապատճառայնության եւ անհաջողությունից վախի դրդապատճառայնության համակարգչային հոգեախտորոշում:*
- *Անձի կամային հատկությունների գնահատում:*
- *Կենսական իրավիճակների ղեկավարման մակարդակի գնահատում:*

2.12.3 Կամային եւ հարմարողական որակների գնահատում:

- *Նյարդահոգեկան կայունության համակարգչային գնահատում:*
- *Լիդերական որակների գնահատում:*
- *Ռիսկի պատրաստության աստիճանի գնահատում:*
- *Ադապտացիոն ընդունակությունների զարգացման մակարդակի գնահատում:*

2.13 Խմբային եւ ցանցային հոգեախտորոշում: Տվյալների միաժամանակյա ստացում եւ վերլուծություն: Տվյալների բազայից արդյունքների արտածում, մշակում եւ ներկայացում:

Խմբային հոգեախտորոշման անցկացման հոգեբանական ու տեխնիկական պահանջները: Խմբային հոգեախտորոշիչ նպատակով ցանցերի ստեղծում: Տվյալների ստացման եւ դասակարգման համակարգեր:

Հոգեախտորոշիչ արդյունքների մշակման եւ արտածման ծրագրեր սպեցիֆիկ ծրագրեր: Հետազոտական տվյալների համակարգչային ներկայացումը on-line եւ հետաձգված ռեժիմներում:

ԲԱԺԻՆ 3

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳԱՆ ԹԵՍԱՍՅԻՆ ԱՈՍՁԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. Ավտոմատացման շնորհիվ հոգեչափողական պրակտիկայում կարելի է դիտարկել մի շարք քանակական դրական արդյունքներ. *(Ընտրեք պատասխաններից մեկը կամ մի քանիսը, 0,5 միավոր)*

ա/ բարձրանում է արդյունքների գրանցման ճշգրտությունը եւ բացառվում են սկզբնական պատասխանների մշակման սխալները,

բ/ թույլատրվում է միայն անհատական թեստավորում՝ խուսափելով խմբային խառնաշփոթից,

գ/ զգայաշարժողական գործիքային թեստերի պարագայում մինչեւ միլիվայրկյանի ճշգրտությամբ գրանցվում են փորձարկվողի պատասխանները,

դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:

2. Համակարգչային հոգեչափողական բազմաթիվ հետազոտությունները թույլ են տալիս առանձնացնել համակարգչային հոգեախտորոշմանը ներկայացվող պահանջների հետեւյալ հիմնական ոլորտները. *(Ընտրեք պատասխաններից մեկը կամ մի քանիսը, 0,5 միավոր)*

ա/ փորձարարական վահանակի կարգավորում,

բ/ Էկրանի կարգավորում,

գ/ ձայնի կարգավորում,

դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:

**«ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
«ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՈՒՄ»**

Ուսումնական ծրագրեր

**Հանձնաժ Է տպագրության՝ 22.10.2008 թ.:
Չափս՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպաքանակ՝ 99:**

ԵՊՀ հրատարակչություն, Երեւան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երեւան, Աբովյան 52